



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 52


ՀԱՐԱՐ

25 ՕԳՈՍՏՈՍ 1907

Ձ Ե Ն Ի Թ    Ձ Ե Ն Ի Թ    Ձ Ե Ն Ի Թ    Ձ Ե Ն Ի Թ    Ձ Ե Ն Ի Թ    Ձ Ե Ն Ի Թ    Ձ Ե Ն Ի Թ

Ձ Ե Ն Ի Թ    Ձ Ե Ն Ի Թ    Ձ Ե Ն Ի Թ    Ձ Ե Ն Ի Թ    Ձ Ե Ն Ի Թ    Ձ Ե Ն Ի Թ    Ձ Ե Ն Ի Թ

Ձ Ե Ն Ի Թ    Ձ Ե Ն Ի Թ    Ձ Ե Ն Ի Թ    Ձ Ե Ն Ի Թ    Ձ Ե Ն Ի Թ    Ձ Ե Ն Ի Թ    Ձ Ե Ն Ի Թ



## Ձ Ե Ն Ի Թ

ՄԵԾ ՄՐՑԱՆԱԿ ԲԱՐԻՁ, 1900

ԱՌԱՋԻՆ ՄՐՑԱՆԱԿ. — Նեոսոդիի դիսարանին. 1903

ԱՐՏԱՔՈՑ ՄՐՑՄԱՆ. — Անդամ ժուռնի. Միլան. 1906

ԵԻՆ. ԵԻՆ. ԵԻՆ.

ԱՄԷՆ ՄԵՏԱՂԷ ԵՒ ԱՄԷՆ ՄԵՏՈՒԹԵԱՄԻ

ԸՆԴՀ. ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉԻ ԹՈՒՐԻՈՑ ՀԱՄԱՐ

Փ. ՍԱՐԳԻՍՅԱՆ ԵՒ ԸՆԿ.

Մեծ վաճառատուն ժամացույցներու, շրթա-  
ներու եւ գոհարեղէններու

ԹԻԻ 16 = ՊԱՇԷ-ԳԱՐՈՒ = ԹԻԻ 16

Օռոդոթ-Պաք հաստատութեան ղեկավար

Ի Բերա, Կ'գանուի գոհարավաճառ Տ.Ֆ.Տ. ԷՐՄԷՔՃԵԱՆ ԵՂԱՐՑ քով,

Թիւ 400 Մեծ-փողոց.

Ձ Ե Ն Ի Թ    Ձ Ե Ն Ի Թ    Ձ Ե Ն Ի Թ    Ձ Ե Ն Ի Թ    Ձ Ե Ն Ի Թ    Ձ Ե Ն Ի Թ    Ձ Ե Ն Ի Թ

آ. آساوریان) شرکت مرتبه مطبوعه — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻԻՆ Յ. ԱՍՏԱՑՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապր-Ալի հասցեւի թիւ 52

Հատոր 40 փարսա









ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԺԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 52

ՇԱՐԱԹ

25 ՕԳՈՍՏՈՍ 1907

## ԳՈՐԾԸ ԹՈՂ ԽՕՍԻ

Այս վերջին թիւով Հանրագիտակ կը փակէ իր շրջանը, յաջորդիւ՝ այսինքն Սեպտեմբեր 1ին վերսկսելու համար նոր և բազմաբեղուն տարի մը՝ որուն յաջողութեան մասին բան մը չենք ըսեր. գործը թող խօսի:

Ընթերցասէր ժողովուրդը զգուած է ալ պոռոտ ուխտներէն, ուռուցիկ խոստումներէն, «սա՛նկ պիտի ընենք», «նա՛նկ պիտի ընենք»ներու գլխացաւութենէն՝ որոնք կը քշուին ամեն օր և որոնցմով կը զարդարուին լրագիրներու ճակատը, սակայն և այնպէս իրականութեան մէջ, ինչպէս բնութեան մէջ, ոչ բան մը կը պակսի և ոչ բան մը կ'աւելնայ. միևնոյն գրական միօրինակութիւնն է որ կը մարսուի հանրութեան կողմէ ակամայ: Մենք չենք ուզեր կոյր զկուրայն հետեւիլ այդ banal սիւթէմին, այլ միայն կը գոհանա՞նք կրկնելով՝ գործը բոլոր խօսի:

1906 Սեպտեմբեր 1ին, երբ Հանրագիտակ կրկին իմ անարժան տնօրէնութեանս յանձնուեցաւ, իրբեւ գործին սիրահար, amateur՝

չանք չխնայեցի, մեր գրական հրապարակին միակ զուարթ թերթը հանդիսացնելու համար զայն. բարոյական և թէ նիւթական ամեն զոհողութիւն յանձն առի՝ ամեն դասակարգի մատչելի զբօսարան հանդէս մը դարձնելու համար Հանրագիտակը. և ահա այս վերջին թիւով կուգամ հարցնել իմ Աղնիւ ընթերցողներուս՝ գոհ մնացի՞ն թէ չէ. գործը թող խօսի:

Զուարթ գրականութիւնը — որուն յետին մշակը կոչուելու պատիւն ալ կը զլացուի նըւաստիս — մշակեցի ամբողջ տարի մը՝ ամէն շաբթու նոր և հետաքրքրական պատկերներ հրամցնելով ընթերցողներուս, որոնց լաւ կամ գէշ ըլլալուն առթիւ բան մը չեմ կրնար ըսել՝ գործը թող խօսի:

Այս առթիւ, պարտ անձին կը համարիմ, իմ խորին շնորհակալիքս յայտնել իմ Ժրաջան աշխատակիցներուս, մեղուաջան գործակալներէս մէկ քանիին (քանի որ եղան անանկներ, որոնք օգտակարութենէ զատ՝ ահագին



վնաս մ'ալ հասուցին մեզ անուններ տալ չենք ուզեր հո՛ւ) և այն բոլոր պարտաճանաչ բաժանորդներուն, որոնց օրը օրին ըրած վճարումներուն երեսէն միայն կարելի եղաւ թերթը հասցնել իր ամբողջական 52 թիւին:

Շնորհակալութեան լայն և երախտագէտ բաժին մը Արեւելք օրաթերթին, որ առանց պաշտօնակցի գձուձ մտածումներու, ամէն շաբթու սիրալոթար հրատարակեց թերթիս բովանդակութիւնը՝ լայն տեղ մը տալով ա՜նոր իր սուղ սիւնակներուն մէջ:

Միւս պարբերականները չեմ գիտեր, սակայն Հանրագիտակի համար խօսելով, զարմանալի է յիշել կարգ մը գաւառացի բաժանորդներու ընթացքը, որոնք երբ փաղաքը չական գովեստներով նամակ մը կը զրկեն մեզ՝ վեցամսեայ բաժանորդագրուելու փափքով, ու երբ պայմանաժամը լրանայ՝ ձայն չեն հաներ: Թերթը չեն ուզեր շարունակել, ատոր ո՞վ բան կրնայ ըսել, բայց երբ ի յարգանս իրենց անունին, պատիւին, մինչև մէկ երկու ամիս կը շարունակենք զրկել՝ ձայն չեն հաներ, համով հոտով կը կարդան, իսկ երբ կարգը վճարման դայ, քունդներն կը տանի...: Ահա այս տեսակ անքիֆաներուն ուղղելով մեր խօսքը, կ'ըսենք թէ շատ տմարդի և անվայել է այդ ընթացքը և թէ պէտք է գիտնան որ, թերթը թէև խօսքերով կը լեցուի, բայց ԴՐԱՄով կը հրատարակուի և այդ դրամըն մեծայարգ բաժանորդներն են որոնք պիտի ապահովէն:

Այս առթիւ կ'ուզենք խօսիլ մեր յաջորդ շրջանին ուղղութեան վրայօք:

Հանրագիտակի յաջորդ շրջանը պիտի վերսկսինք Սեպտեմբեր 1ին:

Հանրագիտակ բացի իր կոչումը եղող զուարթ գրութենէն որ կ'ապահովէ ԼԻԼԱ, պիտի բովանդակէ նաև հին զուարթ գրականութենէն նմոյշներ:

Հանրագիտակի մէն մի թիւը պիտի ունենայ՝ ֆանթէզի և վերջին աստիճան սրամիտ ոտանաւորներ՝ թեթեւ ոճով գրուած, զորս ապահոված է, օրուան գրական հրապարակին է՛ն փնտռուած գրիչը:

Հանրագիտակի կանացի բաժինը՝ ինչպէս այս շրջանին, նոյնպէս և յաջորդին, պիտի շարունակէ սիրուած գրագետուհին՝ ԶԱԶԱ:

Հանրագիտակի այս նոր շրջանի առաջին թիւէն պիտի սկսինք հրատարակել Յրանաացի է՛ն ծանօթ հեղինակի մը արկածալից վէպը, զոր պարբերաբար պիտի հրատարակենք թերթին վերջին երկու էջերուն մէջ:

Հանրագիտակի մէն մի թիւը պիտի բովանդակէ սրամիտ մրցումներ՝ Եւրոպական ճաշակով, և որոնց մէն մի լուծումին պիտի յատկացուի սիրուն նուէրներ:

Հանրագիտակի էջերուն մէջ մեծ տեղ պիտի արուի՝ նորահաս սերունդին զուարթ գրականութեան փորձերուն, որպէս զի այդ հիւսիսները ունենայ՝ գրականութեան մէջ:

Այս առթիւ պէտք կ'զգանք յիշել նաև թէ՛ մեր յաջորդ շրջանը ալ աւելի փալլուն և ինամիտ դարձնելու համար, հրաւիրած ենք Մայրաքաղաքիս ծանօթ երգիծաբաններէն մէկ քանին, շաբաթ ընդ մէջ պիտի երկւին՝ երենց զուարթ գրութիւններով:

Գալով պատկերներուն, մեր ընթերցողները պատեհութիւնը պիտի ունենան վայելելու այն տիպար լուսանկարները, որոնք յաջորդաբար պիտի դրուին մեր առաջին էջին ինչպէս նաև մէջերը:

Գալով դրամականին.

Հանրագիտակ՝ բացի Իզմիրէն, և ոչ մէկ տեղ գործակալութիւն պիտի ունենայ. գաւառացի ամեն անոնք որոնք կը փափաքին Հանրագիտակ ստանալ, պէտք է ուղղակի մեզ հասցնեն դրամը ԿԱՆԽԻԿ՝ Օսմ. մանտարու թի դիւրութեամբ և կամ նամակի դրոշմաթուղթով՝ 20 հատը քսան զրուշի հաշւով:

Հանրագիտակ չպիտի զրկուի այն բաժանորդին որ օրը օրին չը նորոգէր բաժնեդէնը:

Հանրագիտակի մէջ պիտի ընդունուին ծանուցումներ՝ անհաւատալի աժան դիւերով:

Հանրագիտակի խմբագրութեան ու վարչութեան վերաբերեալ ինդքանքներուն համար պէտք է դիմել ՄԻ՝ ՄԻԱՅՆ Տնօրէնութեան:

#### Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Յ. Գ. Անոնք որ կը փափաքին 1907ի ԱՄԲՈՂԶ հաւաքածոն ունենալ զեղջեալ գինով, պէտք է դիմեն ուղղակի Տնօրէնութեան Պապը Ալի Ճատտէսի, Ասատուրեան Տպարան թիւ 52



## ԳԼԽՈՒՍ ԵԿԱԾՆԵՐԷՆ

Միեւնոյն տան մէջ կը բնակէին մայրը ու աղջիկը, երկուքն ալ որբեւայրի:

Ո՛ւր, ե՞րբ, հազար ութ հարիւր քահիւրն... Անօգուտ մանրամասնութիւններ, ձեզի համար, այս ամէնը որ նոյն իսկ եթէ ձշգեւու ելլէի, բան մը չպիտի կրնայի աւելցնել պատմութեանս հմայքին վրայ որմէ ոչինչ պիտի պակսէր՝ եթէ այդ պատմութիւնը տեղի ունեցած ըլլար Իզմիր կամ Պոլիս, Մակարա կամ Նիւ-Եօրք, Բարիզ կամ Թօմպուքթու:

Մայրը՝ սանկ քառասունհինգ տարու մը կար — դեռ ուտուելիք տարիք մը — և աղջիկը հազիւ քսանը չորս: Անուշ էր ան որքան կրնաք երեւակայել և գեղանի՝ որքան կը փափաքէիք որ ըլլային բոլոր կիները:

Որովհետեւ ամէն պատմութիւններու հետոսնիկները անպատճառ անուն մը ունենալու են, անպատեհութիւն մը չեմ տեսներ եթէ մայրը կոչեմ Էզմէրալտա և աղջիկը՝ Սաֆօ:

Բայց խնդիրը անուններու վրայ չէ, ասիկա էն յետին կարեւորութիւնը ունեցող պարագան է գործին մէջ:

Երկուքն ալ որբեւայրի էին, ըսի, և հոս կանգ կ'առնեմ:

Որբեւայրի... Ինչ աղուոր, քնչ թեւադրիչ, որքա՛ն սաղրանքով լեցուն բառ:

Որբեւայրիները, կարգուած կիներու հետ, լաւագոյն ապացոյցներն են Աստուածային բարութեան և միմեկի երկու գեղահրաշ բաները որոնք դուրս եկած ըլլան Արարչագործութեան ձեռքէն:

Որբեւայրին կէս մարած հրաբուխն է՝ նորէն բռնկելու տրամադիր:

Որբեւայրին այն երջանիկ արարածն է որ վայելած է բոլոր աղուոր բաները ամուսնութեան և կորսնցուցած է՝ ինչ որ կայ անոր մէջ անհանգուրժելի... ամուսինը:

Որբեւայրին բարի է, գիտէ ամէն բանին արժէքը, ապերախտ չըլլար, կը գնահատէ քնչ որ կ'ընծայեա իրեն և ետ կը դարձնէ ինչ որ փոխ կուտաս:

Իրենց այս բոլոր առաքինութիւնները ձանջող միակ ամուրինն է և չեմ:

Այս բոլոր առաքինութիւններով օժտուած էր Սաֆօն որուն ամուսինը խեղճ Վիքթորը — որբարեկամն էր երբեմն, — կանուխէն ձգած գացած էր այս վիշտերու հովիտը, հազիւ դիմանալով այնքան որքան կը դիմանան լաւագոյն կօշիկները աշխարհիս... տարի մը միայն:

Եթէ մարդը փոխանակ տարի մը ապրելու իր կնոջ հետ, քսանը չորս ժամ միայն ապրէր, այսօր փոխանակ վինքը կօշիկի նմանցնելու, վարդի պիտի նմանցնէի, ինչպէս սովոր ենք ընել, մենք գրողներս:

Յանցանքը իմս չէ, թո՛ղ ժամանակին մեռնէր:

Խեղճ բարի տղան չուզելով անյիշատակ վերանալ այս երկրագունտէս, թողուցած էր հոս այրի մը որմէ աւելի պաշտելի, շօշափելի, գրկուելիք յիշատակարան մը չեմ տեսած կեանքիս մէջ:

Այն ապուշներէն չէր Վիքթոր որ մեռած ատենին ձեռագիր մը, թուղթի կտոր մը, ծխատուփ մը, գործածուած գաւազան մը կամ հին գիրք մը կը թողուն, souvenir բառը վրան գրուած՝ բարեկամներու հասցէին:

Խօսուն, չարժուն, կենսալի միւս յիշատակարանը՝ Սաֆօն՝ այն քիչ գործածուած գիրքն էր որուն էջերը թղթատել ամէն բարեկամներու համար նուիրական պարտականութիւն մըն էր, չի մոռնալու համար ան... որ ոչ եւս էր:

Երբ գրքի մը նմանցնելու կ'ելլեմ Սաֆօն, անպատճառ կը ստիպուիմ աւելցնել թէ գիրք մըն էր ան՝ նուրբ բայց դիմացկուն կազմով, քայքայուելու վտանգէն զերծ, գիրք մը վերջապէս doré sur tranches!

Ես որ շատ կը սիրէի գիրքերը — դեռ այդ խուլը վրաս է — ստէպ կ'երթայի իրենց տունը, նախ իբրեւ բարեկամը մեռնողին և ապա ու մանաւանդ բարեկամը մնացողներուն:

Սաֆօ... տարաբաղդ աղջիկը, այնքան վշտաբեկ հոգի մը ունէր, այնքան խոցուտուած սիրտ մը, այնքան անմխիթար էր որ արցունքը աչքերէն չէր պակսեր և ահա՛ ինչու, մենք՝ իր բարեկամները՝ մասնաւոր փութկոտութիւն մը կը դնէինք տեսնալու համար թէ մեր մէջէն ամէնէն առաջ ո՞վ պիտի ըլլար իր թաշկինակը հասցնող այդ



աղուոր աչքերուն արցունքները սրբելու համար:

Սաֆօ վերէն վար սեւերու մէջ թաթխուած, հրաշալիօրէն գեղեցիկ, երբ աղու աղու կ'արտասուէր, կը նմանէր այն մերկ աղամանդին որ սեւ թաւիչի վրայ ընկողմանած բըրբը բըրբը կը փայլի և որ մարդուս բերնին ջուրերը վազցնել կուտայ, ցուցափեղկին ապակիին ետեւէն:

Օր մը եկաւ սակայն որ ինքնայատուկ սեփականութեան գաղափարը ճիւղղի պէս չարչրկեց միտքս, և որոշեցի իր հետ ամուսնանալ: Բացի մօրկանը հաւանութենէն, ամէն բան սարքած էինք մէջերնիս:

— Անգամ մը մամային հետ խօսէ, հոն չեղած ատենս, չեմ կարծեր որ չէ ըսէ:

Պատուիրածին պէս ըրի:

Կիրակի առաւու մը երբ Սաֆօ եկեղեցի գացած էր մինակը, չիփ չիտակ տուններնին գացի:

Կէս ժամ զիս սպասցնելէ ետքը, Տիկին Էզմերալտա երեւեցաւ, խնամով շտկուած negligé արդուզարդի մը մէջ:

Ժպիտ կը հոսէր այդ չրթներէն, և խրախուսող, ոգեւորող, կիզիչ ակնարկներ դուրս կը ցայտէին իր խոշոր, սեւ աչքերէն:

Տասը տարու պզտիկցած էր այդ օրը կարծես և չեմ գիտեր ինչ մը կար շարժուածքին մէջ որ զգլխիչ, չփոթեցնող զգացումներ կը յարուցանէր ներսիդիտ:

Spring flower ի բարկ և գինովցնող parfum մը ա'լ առաւել գրգռիչ հանգամանք մը կուտար մեր tête à têteին և ապահովապէս մայրը աղջիկը մոռցնել պիտի տար, եթէ այս վերջինին համար տուած որոշումս հաստատ, անընկճելի արժատներ դրած չըլար սրտիս և ուղեղիս մէջ:

— Խիստ ուրախ եմ, Տիկին, որ բաղդը կ'ունենամ ձեզի այսօր մինակ գտնալու:

— Հաճոյքը փոխադարձ է, Պարոն:

— Անշուշտ զիտած էք որ իմ շարունակական այցելութիւններս պարզ քաղաքավարական ձեւակերպութիւններ ըլլալէ աւելի, ուխտագնացութիւն մըն են յոտս պաշտուած պատկերի մը...

— Complimentէն չնորհակալ եմ:

— Compliment չէ այս, Տիկին, այլ պարզ

խոստովանութիւն մը, պատուաւոր, ճշմարիտ և հաշուուած զգացումի մը արտայայտութիւնը:

— Ատոր կը սպասէի արդէն:

— Լաւ ուրեմն, կը ներէ՞ք որ աւելի բաց խօսիմ, անկեղծ ըլլամ և ըսեմ ինչ որ կը մտածեմ:

— Ձեզի հանդէպ ունեցած իմ վերաբերումս, շատոնց այդ քաջութիւնը տուած ըլլալու էր ձեզի:

Եւ այդ խօսքերը արտասանած միջոցին աթոռ ա'լ աւելի կը մօտեցնէ իմինիս:

Քաջալերուած այս գորովալիւ ընդունելութենէն, կը շարունակեմ խօսքս:

— Քանի որ այդքան ազնիւ տրամադրութիւն մը ցոյց կուտաք իմ մասին, որուն համար միշտ երախտապարտ պիտի մնամ, սիրելի Տիկին, կ'օգտուիմ այսօր ձեր աղջկան բացակայութենէն, մտերմաբար ձեզի հարցնելու թէ արդեօք զգացած սէրս փոխանակուած է:

— Թերեւս ձեր ենթադրածէն աւելի:

Քիչ մը եւս կը մօտեցնէ աթոռը, քիթս մտնալու աստիճան:

Ինչ բարի զոքանչմը պիտի ունենամ, հէ՛:

— Տեսէ՛ք, Տիկին, ուղղակի նպատակս պիտի բացատրեմ: Այլ եւս չարչարանք մըն է ինծի համար այս անորոշ եթեւեկը, հաւատացէ՛ք որ սիրոյս մէջ անկեղծ եմ և ամէն զոհողութիւններու պատրաստ եմ ձեր վստահութիւնը վայելելու համար: Վերջ մը դրէք այս տառապանքներուս, մեղքեցէք զիս, Տիկին, ըսէք թէ սէրս զիս չէ կուրացուցած, և թէ չեմ խաբուած կարծելով գտնել ձեր մօտ այն համակրութիւնը որուն...

Մատուցները մազերուս մէջ կը մխրճէ և անոյշ ձայնով մը՝

— Շատոնց է որ այդ սէրը կը զգաք և եթէ այդպէս է, ինչո՞ւ չըսիք մինչեւ հիմայ:

— Մերժումի մը վախը, չի հասկցուելու տարակոյսը, պարագաներու բերումը, այս ամէնը արգելք եղան մինչեւ հիմայ սիրտս ձեզի բանալու, բայց այսօր քանի որ ինքնալ հոս չէ...

— Աղէկ ըսիք, պարապ տեղը ժամանակ չի կորսնցնենք. հիմա ուր է նէ կուգայ, եւ կէք ներս:



— Ո՞ւր:

— Ննջասենեակս...

Խնդեցա՛ւ, ի՞նչ եղաւ. իր ննջասենեակը՝  
 ի՞նչու, արդե՞ծք...: Դար կը կտրիմ և այս  
 թիւրիմացութիւնը երկար չի քշելու համար,  
 վրայ կը բերեմ:

— Բայց, Տիկին...

— Հոգ չէ, եթէ կը վախնաք, սպասու-  
 հին ալ պատրուակով մը դուրս կը ճամբեմ:  
 Ապտուծմէ էր, ճիշդ այդ վայրկեանին  
 դուռը զարնուեցաւ. ապա թէ ոչ, չեմ գի-  
 տեր թէ ի՞նչ պիտի ըլլար:

Ես աղջկանը համար երթամ և մայրը  
 վրան առնէ՛...:

6. ԱՆՎԻԱՐ

## ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Վ. ԳԵՐԸԳՅԱՆԻՆ

Երբ ամուսնութիւն կուզէ անխրոնով  
 Ամուսնացե՛կ դու՛ք լոկ պայմանագրով:  
 Այսօր ասիկա, քաղաքի սան քերթեր  
 Այս քաղաքի ինչե՛ր լսեմ դեռ:  
 Բայց օգուտ չունին եղբայր ասոնք ալ  
 Երբ երկի կնիկ կուզեն միտս սոցալ:  
 Պատմութիւնը որ եղ պիտի պատմեմ  
 Լուծմունքն է նմանիս մեր հարցին ո՞նց:  
 Սօփի եւ Կարպիս, դեռ երիտասարդ.  
 Կուզէին ըլլալ մեկ ուսանի սարդ.  
 Ուսի սերտերին երթալով առջեւ,  
 Խոստացան գիտար պատել վերջ մինչեւ:  
 «Հնազանդ»ին Սօփի փոխարէն,  
 «Այո» փափաց քրքրեալն ծայրէն.  
 Նոյնպէս Կարպիս ալ այդ վե՛ն «սէ՛ր ես» ին  
 «Այո» գոռաց՝ սերտերին երեսին:  
 Երեք չորս ամիս համբոյր, սէր, ժպիտ,  
 Անկէ ետք սակայն, կոխ, ծեծ, կամիք:  
 Սօփի տունին մէջ կուզէ պէսչեմ:  
 Երկն ալ կ'ըսէ, «ճիշդ ճիշդ պէսչեմ»:  
 Բայց կինն ու՛ժ կուտայ մարմնով լացին:  
 Մինչեւ կը լսէ ամբողջ դրացին:  
 Ամենքն ալ կ'ըսեն աս նայինք շուտով  
 Տեսնել քե՛ն ձեզմէ յանցաւորն է ո՞վ:  
 Այս առաջարկը կ'ընդունին սիրով,  
 Եւ ելլը կ'ըլլայ խափուկ իսխրով:

Երկար կը տեւէ. մեկը նարահաս

Կուզէ՛ք որ կ'ըսէ ապրիլ ընտանք.

Կարպիս ե՛լ գրե՛ նայիմ ֆոնթոնար.

Տունին գործերը առնել և վրադ:

Որոշումին աս է խելացին

Կ'ըսէ ու կորեկ դրացին:

Եւ Կարպիս կ'ըլլայ սպասաւոր սան,

Կ'աւլէ կ'եփէ եւ կ'ընէ կարկնքան:

Խեղճ մարդուն դէմքը քե՛ն քրտնաւ է

Բայց ձեռքն է ֆոնթոնար հարկը յօդուած է:

Օր մ'ալ կը նայիս երբ տուն չէր Կարպիս,

Որ շուկայ գացած էր գնելու միս.

Սօփի գլխով տունին աւազան

Մօտերը չունէր ջուան գաւազան.

Աւազանն ըսես լայն էր եւ խորունկ

Ջուրն ալ հասեր էր մինչեւ իր սրունք:

Նոյն պահուն Կարպիս մե՛ն տունն ներս,

Սօփի կ'ըսէրսի հայցել՝ գու՛ր, աղերս

Աղւոր Կարպիսը եկա՛ւ ազատէ՛

Վրաս խօսացած ևս սերդ ա՛հ է:

Բայց Կարպիս հանդարտ հանած ֆոնթոնարն ալ

Կրկնութի կարգալ ծանր, բարձրաձայն.

Բայց կրկնիկ, կ'ըսէ, հո՛ս գրուած չէ քե՛

Գնա՛ կրկնիկը ջուրէն ազատէ...:

ԳԵՂԱՍՏ ՊԵՏՐՈՍԵԱՆ

## ՆՈՐ ՇՐՋԱՆ

Բացուած է Հանրապետական Նոր շրջանին  
 բաժանորդագրութիւնը՝

Կ Ա Ն Խ Ի Կ

Ողջափ տուժեցինք և ձրի թերթ կարդա-  
 ցնելու բարիքը ըրինք կարծեմ բաւական է,  
 քիչ մ'ալ նշանակաւորութեամբ և պատուով գոր-  
 ծենք:

Յառաջիկայ Նոր շրջանին համար որոշած  
 ենք միմիայն ԴՐԱՄԸ՝ ՎՃԱՐՈՂԻՆ թերթ  
 ղրկել, և ամէն անոնք որոնք մը փափաքին  
 ստանալ Հանրապետական, առաջին թիւէն  
 պէտք է բաժնեգինք՝ տարեկան 54, վեց-  
 ամսեայ 27 ղրջ. ԿԱՆԽԻԿ վճարեն:

Գալով Առաքաղարի խնդրոյն, կը խնդ-  
 րենք Տիար ՍՏԵՓԱՆ ՄԱՆՈՒՄԵԱՆԷ, որպէս-  
 զի հաճի 1907 Մարտ 1էն մեզ հասցնել իր  
 ստացած թերթերուն փոխարժէքը՝ 27 ղրջ.:  
 Իսկ ծանօթ քանքարաթաղոյց Կարապետ  
 Պուրմայեանին. արդէն կուսեցով թէ չպիտի  
 վճարէ մեզ մեր արդար պահանջը, փառ-  
 տարանի յանձնած ենք խնդիրը որ Կառա-  
 վարական արդար օրինոք դանձուի այդ  
 դումարը՝ 850 ղրջ.:



# ԲԵՐԱՑԻ ՕՐԻՈՐԴԻ ՄԸ ՕՐԱԳԻՐԸ

Իրիկունի մուսլը կամաց կամաց կը սքօզէր չորս դին: Գորշ երկինքին թանձր ամպերը փարատել կուզէր կարծես՝ սուր ուժգին հով մը՝ որ հիւսիւսէն կը փչէր: Գատը-Գիւղի լեզուակին՝ Մօտայի մարգագետնին եղերքը, հսկայ ծառերուն բունին մօտ, քով քովի նստած էին մանչ մը և աղջիկ մը, ու քիչ հեռուն, տասը քայլ անդին՝ մաքուր ծերուկ կին մը քաթօք գլխարկով, սևեր հագած, ան ալ իր կարգին նստած էր գետինը և ձեռքը ծնօտին՝ կը դիտէր Մարմարայի կապոյտ ջուրերուն խել խօլ վազքը:

Տղան՝ ազնիւ երիտասարդ, կէս մը հագած իր ընկերուհոյն, կը խօսէր, անդադրում բառեր մը կը կրկնէր. մինչ աղջիկը, հեզահամբոյր դէմքը ծռած կուրծքն ի վար, ձեռքի չոր շիւղին հետ կը խաղար՝ հեղիկ հեղիկ լսելով իրեն ուղղուած խօսքերը:

Ո՞վ էին:

Հոնկէ անցած ատենս, ճամբուս վրայ հանդիպած այս պատկերը՝ պահ մը ուշադրութիւնս գրաւեց, և ակամայ սկսայ իրենցմով զբաղիլ ու վերաբերուիլ:

Որչափ որ կը ներէր երեկոյեան իրիկսամուտի ստուերը, դիտեցի թէ այդ աղջիկը, քիչ հեռուն նստող կնոջ կը նմանէր դէմքով, աչքերնին և իրենց բոլոր դիմագիծերը զիրար կը յիշեցնէին. ուստի աղջիկը ըլլալու էր ու կինը անոր մայրը:

Բայց տղան...

Երեքշաբթի՝ գործի օրուան մը իրիկունով, գիւղէն դուրս՝ Մօտայի այդ լեզուակին ծառաստաններուն մօտ, ի՞նչ մտածուով իրենք բերեր նետեր էր և ի՞նչ տաք խօսակցութիւն մը մոռցնել տուած էր իրենց՝ օրհասը, գիշերը, որ տակաւ կիջնէր երկինքն ի վար:

Նշանած էին արդեօք...

Անվրէպ:

Միմիայն ամուսնութեան եղեմը համարուող այդ բեռիօսն է որ մոռցնել կուտայ ամեն ինչ, և իր անուշ ընթացքին մէջ

զմարդ կը բարձրացնէ, ու վերէն, շատ վերէն դիտել կուտայ աշխարհը:

Պահ մը կեցայ հեռուն և կուշտ ու կուռ դիտեցի զիրենք, զմայլեցայ, սրտի երգերը կտուցնուն՝ վրայ այդ զոյգ տատրակները սիրեցի, ուսումնասիրեցի և շատ անուշ գտայ այդ կեանքը, այդ տեսակցութիւնը շատ ազնիւ, շատ վսեմ գտայ:

Հապա մայրիկը: Այդ տարեց կինը որ հոտ կծկուած՝ ծառի մը բունին վրայ ալատ համարձակ ձգած էր, թոյլ տուած էր իր հոգեհատորին, որպէսզի սէրը ըմբռնէ պատուոյ թեւերուն տակ ապաստանած: Ինքը, այդ գուրգուրոտ մայրը, պահապան հրեշտակ մը կարծես, հեռուն կը հսկէր անոնց վրայ. թեւատարած արծիւ մը, որ իր բարոյականիւ լայնեղր թիւերը պարզած հանրութեան աչքին տակ, անձամբ կեցած էր հող, որպէսզի բամբասող բերաններ չը համարձակին դիտողութիւն մը ընել երկուքին tête à tête: Այս օր նշանած էին, վաղը պիտի ամուսնանային անշուշտ:

Ու կը խորհիմ հիմա, որ այդ անուշ պատկերը ձգած տուն դարձած եմ, պահ մը խորհեալու, մտածելու այդ անուշութեան վրայ թէ՛ մեր մէջ չկայ այս ազնիւ թոյլտուութիւնը և կամ պարկեշտութիւնը: Մեր մէջ միշտ երկու ծայրայեղութեան կը հանդիպինք:

Կան մայրեր, որոնք իրենց աղջիկը այնքան խիստ կը պահեն նշանածութեան չըջանին, որ բոլորովին կը ջլատեն անոնց բոլոր անուշութիւնները և կը զրկեն վայելելէ այն փնտռուած հաճոյքները՝ զորս նշանած զոյգեր միայն կրնան ըմբռնեն:

Կան մայրեր ալ, որոնք այնքան սանձարձակ կը ձգեն իրենց աղջիկները և այնքան չեղոք դիրք մը կը բռնեն որ, շատ անգամ երիտասարդին հետ ժամերով կը հեռանան տունէն և ծնողաց հսկողութենէն, և նոյն իսկ տեսնուած ու իմացուած է որ, կարգ մը մայրեր կը թոյլատրեն իրենց փեսացուին



որպէսզի իր սաղագայ կէսին հետ այլուր գիշերէ:

Ահա մեր մէջ բերել ուզած երկու ծայրայեղութիւնները, որոնք երկու եզրերով ալ անտանելի ըլլալէ զատ անվայել են:

Մօտայի անկիւնը տեսած պատկերս, եթէ կարելի ըլլար լուսանկարել և իբր մօտէլ հըրատարակել այս էջերուն մէջ, կենդանի օրինակը և տիպար դասը պիտի ըլլար այս նիւթին շուրջ, որ կարծեմ թէ կարի շահեկան է:

Մայրը հոգ, նոյն իսկ իր ներկայութեանը թոյլ տուած էր վայելել նշանածի անուշ փոքրին իր տատրակներուն. անոնք ընտելեան ստուերին մէջ իրարու սիրտ բացած, իրենց սաղագայ երջանկութեան յատակագիծը կը պատրաստէին թերեւս, մինչ հեռուէն հսկող մայր հրեշտակը կը գուրգուրար, հըսկում մը միայն կընէր, այնքան հեռուէն՝ որպէսզի չը լսէր այդ տաք խօսակցութիւնը ի հանգիստ իրեններուն:

Թերեւս բամբասող բերաններ կազմ ու պատրաստ պիտի ըլլային կարծիքներ փոխանակելու, զիտողութիւններ տեղալու, քիթիներ յարուցանելու՝ այս անուշ tête à tête վրայօք, սակայն անդին, քիչ մը հեռու գտնուող պահապան հրեշտակը կար, որ իր պատկառելի ներկայութեամբը՝ մէկ ակնարկով գետին խոնարհել կուտար՝ այդ կծու և բանասարկու հոգիներու թոյնածայթք աչքերը:

Ծնողական խստութիւնը կը հասկնամ մինչեւ աղջկան մը հասուկ հասակը, մինչեւ ըսել կուզեմ ամուսնական կապը, իսկ անգամ մը որ երկու յարմար եղբեր իրար գան և ազնիւ ու մաքուր սէրը իր կապը դնէ երկուքին միջեւ, ալ ծնողք հեռուէն հեռու, վերէն հսկողութիւն մը ընեն, ու բարոյական հովիւը ըլլան անոնց: Գառնուկերը կարածին, ուզածուն պէս ժամանակ կ'անցնեն. հովիւը իր սրինգով կը հմայէ ու կը հսկէ՝ առանց զանոնք աչքէ վրիպեցնելու:

Աղջկան մը նշանածութեան ատեն՝ մայրը հովիւք պէտք է ըլլայ, հսկողը միայն:

ԶԱԶԱ



## ՀԱՆԵԼՈՒԿ ՆՈՐԵԼՈՒԿ

(ԴՃՈՒԱՐԱԼՈՅԾ)

- Ո՛վ է որ յանախ անխիղն ու անգուք Մարդու ջիղերը սիրքն հանէ դունս...
- Ո՛վ է որ մարդս գրեթէ շատ հեղկընէ մի ապուռ եւ կամ խելայեղ:
- Ո՛վ է որ մարդու կ'առնէ դրամը, Ու փոխան չիսար սիրոյն տրամը:
- Ո՛վ է որ անկեղծ սիրոյ փոխան միտք, Իբր անգգայ՝ կը պատճառէ վիտք:
- Ո՛վ կուտայ մարդու հանոյք մը անուշ Յետոյ զայն կ'ընէ անգգայ ապուռ:
- Ո՛վ առողջութիւնդ միտք կը խանգարէ, Կարծես քե ունի ինք կազմ մը քարէ:
- Ո՛վ կ'ընէ մարդս հիստայ ու քացիկ Ու անկէ վերջն ալ խեղճ ու մուրացիկ:
- Ո՛վ է որ մարդու շատ կը քախանձէ Ու վերջն ալ անոր սիրք կը խանձէ:
- Ո՛վ է այն որուն մարդ կ'ըլլայ՝ գերի Ու ձախողուածոց մէջ կը դեգերի:
- Ո՛վ է որ մարդուն ներքեցի միտք սեր վերջն ալ պատճառէ սրտի մեծ յոյգեր:
- Ո՛վ սիրոյ համար մեծ ճիգ կը քափէ Ու վերջն ալ կեյլէ ու զայն կը խափէ:
- Ո՛վ կը փնտէ հաւասարիմ մարդ Ու վերջը ձգէ զանի իր քակարդ:
- Ո՛վ կը փնտէ ապուռ սիրող մը Որ միտք ականջին բերէ խաւ օղ մը:
- Ո՛վ է այն որուն գրագէտ Արմեն Տուալ իր խելքը ու տաղանդն ամեն:
- Ո՛վ կը նմանի անմեղ հրեշտակի Որուն կը յանձնեն սիրքդ, հոգիդ յարգի:

Հանելուկիս ո՛վ որ ըլլայ գիտակ Պիտի ըսանայ մէկ Հանրագիտակ Պայմանաւ որ նա ցնձայ բոլոր մը՝ Ու զուարեանայ ամբողջ մէկ օր մը:

Մնամ

Վանքին պաղը  
ԵՐՄՈՂ





## Մ Ե Թ Ղ Ե Ս Ը ...

[ՎՐԱՆ ԳՈՑ ՅՕԴՈՒԱԾ]

— Մէթէրէսը՝

— Այո՛, մէթէսը ...

— Մէթէրէսը՝ ինչ է քի գրեր է ... երկու աչկո՞ւ չեղլայ բիչքօ մը պոէթիմ ...

— Սա ուր է պսակսը կընիկ մը կառնեն կը նստին տէ ... իշտէ ...

— Կոցէ տա կազէթան տէ ըռաֆը դիր ծօ՛ ... ալ չափը անցաւ, տահա պան կա՛յնէ թող գրեն, կըսէ տարեց կինը բարոյական կրկնոցին տակ պարտկուիլ ուզելով, այն կինը՝ որ իր հասուկ աղջիկները առջին ձգած, գիշերուան մութին զբօսարանները կը պըտըտցնէ զանոնք, ու երբ մէկ երկու երիտասարդի հետ մութ տեղը խօսելնին տեսնայ, տունը կը ձգէ՝ դրացիներն վիզիթաի կերթայ et ainsi de suite: Բայց մենք որպէս զի գայթակղութեան տեղի չիտանք, երկու տողի մէջ բացատրենք մեքռես՝ ֆրանսական բառը, որ մազերէն մինչեւ եղունգները կը ցնցէ հասուկ ու նեցուկ մանչ զաւակ ունեցող ծընողքները:

Մէթէսը, պարզ կին մըն է կէս-ամուսնացեալ, անանկ մարդու մը հետ որ ուզած ատենը ծրար մը բամպակի պէս կոնակէն կրնայ նետել, և որուն համար Դատաստանոփան Խորհուրդը տարին տասներկու ամիս իր դռները գոցած է, ինչպէս նաեւ ականջները, չուզելով լսել այդ լքման պարագաները, քանի որ ո՛ր է տէր պապա մը մորուքը չարժած չէ վրանին, ոչ ալ ձեռք պազցուցած:

Մէթէսը բուն կնիկէն սա առաւել տարբերութիւնը ունի որ, անոր սէրը և քօմբլիմանները բնաւ հիննալ ծթով չեն գիտեր, միշտ թարմ, միշտ վառ է անոր շուայած այն ամէն բաները, որոց հանդէպ այրը կը թուլնայ կը լիկի: Օրինակի համար, մէթէս մը երբեք և երբեք այր մարդուն դէմ չամաշիր չփոխէր, ոտքերը չի լուար, մազի պօյա չի դնէր, գուլպաներով չի պարտիր,

քիթը չի խառներ, երկու կողմին բէշերը մէջքին չի խօթեր, զարգավաթ չստրկեր, ձեռքը կուրծքին մէջ կոխելով բիրէ, թախտապիթի չի գթուէր, et par dessus le marché երբեք և երբեք մեքռես մը «երկու լուսդ քէօնայ, սատկիս տէ խալըսիմ» չըսեր իր մարդուն, ահա ինչու կանացի աշխարհին մէջ այս առթիֆօլօն օ տը քօլօնի պէս ձեռքէ ձեռք կը խլուի և որուն վարկը երբեք չինջնար:

Դադափար մը տալու համար մեր Գերադնիւ ընթերցողներուն, հոս պիտի պատմենք թէ ինչպէս միւսիւ Համբիկ իր հայրը՝ Մարտիրոս աղան համոզելով լոլոզելով, բուն իսկ մեքռեսը խածնելով՝ տունը բերած էր իբր վարժուհի իր պղտիկ քոյրերուն:

«Ասանկ բան կըլլայ մի եւ» ըսողները թող կրկին և կրկին կարդան յօդուածս, որպէս զի համոզուին սա ճշմարտութեան վրայ թէ՛ միմիայն աքլորն է որ չածէր, ջորին է որ չի ծնիր և Կարապետ Պուռմանան է որ թերթիս ութը հարիւր զրուշը կըլլելէ վերջ չուզեր վճարել, ուրիշ ամէն բան կըլլայ կը կատարի ընտանեկան չըջանալներու մէջ:

\* \* \*

— Նա՛, աս օր ալ վերի քօնսօլին վրայի վազօն կոտրեցին ... ասանկ երթայնէ տունը տեղէն քակէն պիտի բիճերը ... ինչ ընեմ ես ալ չաչըրմիշ եմ ըրեր կըսէ Տիկին Մարտիրոս, սալօն ըսուած կոկիկ սենեկին մէկ անկիւնը նստած, մինչ Մարտիրոս աղա ակնոցը քիթին կէսը՝ Արեւելքի եկեղեցական լուրերը կը կարդար, ու միւսիւ Համբիկ սիկառը կը քաշէր երեկոյեան ճաշէն վերջ:

— Էյ ճանըմ, քիչ մը տիխաթ ըրէք, աս ամէն օր զիյան զիյան, սօ՛նը ... կըսէ աղան ակնոցը քիթէն հանելով, սօնը ...

— Հիչ, ի՛նչ պիտի ըլլայ, Համբիկիս ըսածը բէք չիտակ է, ան ֆրանսերի կընիկ է



եղէր ինչ է եղէր, իշտէ անիկայ բերենք, թող առնէ նստի, տղան քանի վայրէջէ կը ճըվա կոր, պագի բանի խելքս չի հասնիր, իրաւ քի քիչ մը սուղի պիտի ըլլայ ամա՞, թէրպիյէ ալ պիտի ըլլան ա՞ ... կըսէ կինը նստատեղին խախտելով, յաղթական ձեւով մը:

— Մա՛յր, ինչո՞ւ վրայ կուտաս, աս օր վաղօն կոտորեցին, վաղը տունն ալ կը բռնկեցունեն կը լմնայ կերթայ, ձգէ, ինչ կուզէ նէ ան ընէ ...

— Պէ պապա՞մ. բերենք, բերենք ամա, աստ պիչիմ կընիկները ... ինչ գիտնամ ... ը՞ ... էօֆ ... նասըլ ըսեմ ... (աչքերը զաւկին Համբիկին վրայ դարձնելով ձեւեր մը կառնէ):

— Խլլտին ցուրտն է մահանայ, հասկըցայ միտքդ ամա, մահանայ է մահոնայ ... ես հոս եմ հոս, խապա՞ր ես ...

— Էյ աստ կընիկը գայ պիտի ամա՞, լեզու չիտէ նէ նասըլ պիտի ընենք, ես չիյտեմ դուն չիյտես, պղտիկները չիյտեն, բան մը ըսել ուզելու ըլլանք նէ թէրծիմանու թիւնը ո՞վ պիտի ընէ ...

— Տահա աղէ՛կ եա՞ ... լեզու կը սովբինք ...

— Դուք գիտէք, իմ ըսած աղջիկս զավալըին մէկն է, հարը մեռած մարն ալ դուրսն է եղէր, հացի վարայ տէյի տեղ մը մանալ կուզէ կոր ... կըսէ միւսին:

— Էյ աղէկ եա՛, հրամա՞նքդ ուրկէ կը ճանչնաս կոր ... աստ հասկնանք օղլում, դուն տեսնէր ես աղջիկը ...

— Հապա, բարեկամ մը ունիմ, անոր բարեկամներէն ուրիշ ծանօթ մը իր մէկ բարեկամին ըսեր է որ, եթէ բարեկամ մը ծանօթ ունիս նէ խեր է, սա աղջիկը տեղ մը իսպուլանտրմիշ ըրէք տէյի ...

— Ծօ՛ պու նասըլ իշ... աստար մարդ կը ճաչնայ կոր եղեր, հինգ հինգ զրուշ տան նէ կէլինմիշ կըլլայ կ'երթայ, քիւֆէ մը բարեկամ ըսիր, աստեղ մէջէն հի՛շ պէտք ունեցող չէ՞ եղեր... չօգ չէ՛յ...

Ինչպէս ըսի դուք գիտէք, կուզէք նէ վաղուընէ լուր գրկեմ բերել տամ կամ ես առնեմ բերեմ...

— Տեղը գիտե՞ս կոր քի Համբիկ... կ'ըսէ հայրը աչքերը բացած...

— Զէ՛... այսինքն լուր ընեմ ինծի բերէն ես ալ առնեմ հոս գամ ըսէի պիտի...

— Համբի՛կ, զաւակս, դուն ինծի նայէ, վաղը կերթաս աստ աղջիկը ուր է նէ կը գտնաս կառնես կուգաս քի՛ աս վըղըլթըն ալ լըմնայ, չէ նէ՛ ես պիտի լըմննամ:

— Շատ լաւ մամաս, վաղը առաւօտ մատմազէլը հոս է...

— Ա՛լ սանա պիր բլաքօն տահա, ըլեզկեարը պուլուրսաք արքամըգտան սարան թաշը եէթիշմէզ... բերէ՛ք նայինք, ամա աս գալիքին կոտրածը՝ պղտիկներուն կոտրածին չըմանիր...

— Դուն ասանկ բաներու մի՛ խառնուիր Մարտիրոս աղա՞, չօգ չէ՛յ... ամա դուն բէք տուտը եղար ալթըլս... ա՞... ես գիտեմ կոր ըրածս թողածս... ըսելով Տիկինը ոտքի կելլայ և այսպէս որոշումը կը տրուի:

\* \* \*

Հետեւեալ օրը ցերեկին մօտ, բաց ֆայթօն մը կուգայ կը կենայ դրանը մօտ ու մէջէն միւսիւ Համբիկ զսպանակի պէս վար ցատկելով մատմազէլին թաթիկէն բռնելով վար կ'առնէ, մինչ դուռը բացուելով ներս կը մտնան: Մարտիրոս աղան տունը չէ. Տիկինը զանոնք կը դիմաւորէ:

— Պօն զուղ մատմա՞մ...

— Ասծու բարին, ա՞ս է Համբի՛կ ... ըսելով ոտից ցլուխ կը քննէ կը գննէ օրիորդը, որ համակ մետաքս թուալէթ մը ըրած էր կանթե պօթէ դէմքին ալ bauté.

— Ու սօն լէ բրթի ... զը վուլէ լէ վուաղ:

— Ինչ կըսէ կոր ծօ Համբիկ, աստ ինտոր ալ իօյի կը խօսի կոր ...

— Հապա՛, բուն իսկ ֆրանսացի է, սանքի կըսէ կոր քի, ո՞ւր են պղտիկները տէյի...

— Նա՛, նա իչէրքի օտաւտ տըրլար ամա՞, գուզում մատմազէլ, Համբի՛կ, ըսէ քի աղէկ թէրպիյէ ընէ, չի ծեծէ, լեզու սովբեցունէ, գէրէ ճըպըպըգ արթըլս աս օր թագէ լամպա մը կոտրեցին ...

— Դուն հոգ մընէր մամաս, ես մատմազէլը տանիմ տղաքը բռնեցանիք ընեմ, անկէ ետքը իր օտան ալ ցուցնեմ տէ գամ... ըսելուն չի մնար դուռը կը զարնուի և չորս բեռնակիր ներս կը մտնան՝ անտուկներով:



ուրիշ մէկն ալ վեց գլխարկի տուփերը բռնած կը հասնի:

— Ծօ՛ւ ասոնք ինչ է, եազլըխ չի գա՞ն, հէ՞ Համբիկ ... կըսէ մայրը շուարած ...

— Չէ չէ, մատմազէլին թախըմներն են, կէթիրին, պուրտա, մինչդեռ, պուրտա եօզարը չըզարըն ըսելով չիտակ օրիորդին սենեակը կառաջնորդեն, մինչ Տիկինը ափ ի բերան կը մնայ:

— Նասրը Ֆլօռա՞, աման պէլլի էթմէյէսին հա՛ ... նասէխառօ, եանըլըպ տառուռմճա, ֆիլան դառըշտըրմա, սօղրա գառըշմամ ... ըսելով դռանը մէջը համբոյր մը կառնէ էնսթիթիթուխին, ու ձեռքերը չփելով կսկսի օգնել սնտուկները տեղաւորեցնելու համար:

— Ախ ... Համբիցամու, սէն մէռազ էթմէ, պէն ցօգ կիւզէլ եաբածայիմ, մարէճա իտէրիմ, պու կիւն պէնի եալինիզ պըռազմայածագսին ... հէ՞ ... ո՛ւհ ... նասէ խառօ ...

— Աման Ֆլօռա, իսմինի սօռա՛րսալար, էլիզ տէ, սագըն Ֆլօռա տըր տէմէյէսին հա՛ ...

— Եօգ գալէ, պէն ցօծուգ տէյիլիմ քի, թօ քսէռօ, ախ թի օռէա սպիթի ինէ աֆթօ, Համբիցամու, քալա եէնիքէ աֆթօ ի տիւպառա ...

— Պագ քի պէնիմ պապամ կէլիրսէ օնաբօլիթիքա էտէսին, չիւնքիւ պիր ազ գուռնազ տըր, եալընըզ ֆրանսըզ լիսանընդ գօնուշ ...

— Բօլի քալա. ամա պանա պիր տախթիլիտի ալածայիտին սօզ վէրտին ...

— Բէք էյի ճանըմ, ըսելով մինչ վար կիջնար ... մայրը կը ձայնէ,

— Տահա չի տեղաւորցաւ, տղաքը կը պէքէյէն կոր ...

— Հա՛, հա՛, կուգայ կոր, օտան շտկեցի քի, աճէմի է, պէլքի կուստօն չիյտէ տէյի, նա կուգայ կոր ...

